Պարոն/Տիկին Գ. Գևորգյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ
պարոն Գ. Բաղրամյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«06» Մարտի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Գևորգ Գևորգյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Բարսելոնա, Իսպանիա, 2024 թվականի փետրվարի 25-ից մարտի 1-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Շարժական կապի գլոբալ համակարգի ասոցիացիա (GSMA):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել GSMA կողմից կազմակերպվող շարժական կապի համաշխարհային կոնգրեսի անբաժանելի մաս հանդիսացող նախարարական ֆորումին (Ministerial Programme):
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** 2024 թվականի GSMA կողմից կազմակերպվող Նախարարական ֆորումին մասնակցել են նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչները և նախարարության նախաձեռնությամբ «Հայաստան» միասնական տաղավարով ցուցահանդեսին մասնակցում էր հայկական 14 տեխնոլոգիական ընկերություն, որոնք ներկայացնում էին իրենց արտադրանքն ու նորարարական լուծումները տեխնոլոգիական, արհեստական բանականության և մի շարք այլ ուղղություններով: Ընդհանուր առմամբ 2024

թվականի շարժական կապի համաշխարհային կոնգրեսին մասնակցել են շուրջ 100 000 ոլորտային նախարարությունների, կարգավորող մարմինների, ինչպես նաև ընկերությունների ներկայացուցիչներ շուրջ 205 երկրից:

Նախարարական ֆորումի ընթացքում քննարկվել են թվային տեխնոլոգիաների զարգացմանը և առաջընթացին, շարժական կապի 4G, 5G և հետագա տեխնոլոգիաների համար ռադիոհաճախականությունների բաշխման ռազմավարության մշակմանը, COVID-19 համաճարակի արդյունքում առաջացած իրավիճակի վերականգնմանը, թվային տնտեսության փոխակերպման ֆինանսավորման աղբյուրներին, արտակարգ իրավիճակների ժամանակ շարժական կապի դերին, ինչպես նաև շարժական կապի զարգացման հետագա միտումներին վերաբերող մի շարք հարցեր: Մասնավորապես՝ ներկայացվել է շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման 5 տարիների ընթացքում հեռահաղորդակցության գլոբալ շուկայի զգալի էվոլյուցիան, ինչպես նաև շարժական կապի օպերատորների կողմից 2020-2025 թվականների ընթացքում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրմանն ուղղված կապիտալ ծախսերի և վերջանական սպառողների համար ծառայությունների գների մատչելիության հարցերը:

Ֆորումի ընթացքում ներկայացվեց շարժական կապի 5G տեխնոլոգիայի կապը արդյունաբերության զարգացման և նորարարական տեխնոլոգիաների ներդրման հետ: Նշվեց, որ շարժական կապի 5G տեխնոլոգիան հնարավորություն է տալիս անխափան կերպով միավորել արդյունաբերության ֆիզիկական և թվային ոլորտները: Նշվեց նաև, որշարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրմամբ արդյունաբերություններն օգտագործում այն՝ օպտիմալացնելու արտադրական գործընթացները, բարելավելու մատակարարման շղթայի կառավարումը և բարձրացնելու ընդհանուր գործառնական շարժունությունը: Շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրումը նպաստում է Իրերի ինտերնետի (IoT) և արհեստական բանականության (AI) միջոցով իրականացվող մի շարք միջոցառումների կիրառումներ, ինչը խթանում է երկրների տնտեսական զարգացումը:

2024 թվականի հունվարի դրությամբ 101 երկրներում 261 օպերատորներ գործարկել են շարժական կապի 5G տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող ծառայություններ, և ավելի քան 90 օպերատորներ 64 շուկաներից պարտավորվել են գործարկել դրանք տարվա ընթացքում: GSMA Intelligenc-ը (GSMAi) կանխատեսում է շարժական տվյալների տրաֆիկի քառապատիկ աճ մինչև 2030 թվականը, որում շարժական կապի 5G տեխնոլոգիայի

ծածկույթի և հզորությունների ընդլայնումը կարևոր դեր է խաղում՝ ապացուցելով ենթակառուցվածքի շարունակական ներդրումների կարևորությունը:

7. Հանդիպումները, ելույթները՝ Ֆորումի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ չեն եղել:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Ֆորումի օրակարգը և դրա ընթացում տեղի ունեցած քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝https://www.mwcbarcelona.com/agenda:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջարկվում է շարունակել շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրմանն ու զարգացմանը վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրությունները և քննարկել դրանք նաև ՀՀ-ում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման աշխատանքների շրջանակում կիրառելու նպատակահարմարությունը:

Գործուղվող ---------- 06.03.2024 ---------- ***Գ.Գևորգյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ

1. Մարմնի անվանումը_Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 077-ՀՆ , 14.02.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
ՀՀ ՀԾԿՀ -ի՝ հեռահաղորդակցության վարչության բաժնի պետ **Գևորգ Գևորգյանին**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ Բարսելոնա / Իսպանիայի Թագավորություն /

5. Գործուղման ժամկետները՝ 25.02-01.03.2024թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ ,գիշերակաց ,ճանապարհածախս :

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Գևորգյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	292,815.00	292.815
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	365,062.00	365.062
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	91	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39494	
	Օրերի քանակը	6	
	Ընդամենը (դրամ)	236,964.00	236.964
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		894.841	894.841

Գլխավոր ֆինանսիստի
ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

05.03.2024թ.